

անդամ: 1995ին եւ 1999ին մասնակցած է Ս. Էջմիածնի մէջ գումարուած ազգային եկեղեցական ժողովներուն: 1975-79ին Ամերիկայի հայկական համագումարի գործադիր տնօրէնի պաշտօնը վարած է: 1969-77ին «Ալեք Մանուկեան» մշակութային հիմնադրամի հոգաբարձութեան ատենապետ եղած է, Հայագիտական ուսմանց եւ Հետազօտութեանց ազգային ընկերակցութեան հոգաբարձութեան անդամ (1973-90) եւ Ս. Ներսէս ճեմարանի հոգաբարձութեան անդամ (1985-77):

Հրատարակած է բազմաթիւ ռուսագիտական եւ հայագիտական ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ, ինչպէս եւ յուշերը՝ *From My Life and Thought: Reflections on an Armenian-American Journey* (2022):

Տենիս Փափազեան իր մահկանացուն կնքեց 16 Մարտ 2023ին:

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

varny1@yahoo.com



ՄԵՐԻ ՔԻԼՊՈՒՐՆ-ՄԱԹՈՍԵԱՆ

(1930-2023)

Մերի Ալլերթըն Քիլպուրն ծնած է 9 Յուլիս 1930ին, Լոս Անճելըսի մէջ: Անոր նախնիներէն մէկն էր բժիշկ ու միսիոնար Ֆանի Էնտրիզ Շեփըրտը (1856-1920), որ 1882-1919ին ծառայած էր Այնթապի մէջ:

Ապագայ պատմաբանը 1951ին վկայուած է Սթենֆըրտ համալսարանէն, իսկ յաջորդ տարին յաճախած է Պէյրոյթի Ամերիկեան համալսարանը, ուր ստացած է Մերձա-ուր Արեւելքի պատմութեան մագիստրոսի տիտղոսը: Այնուհետեւ, վերա-դարձած է Սթենֆըրտ, ուր պաշտպանած է դոկտորականը 1955ին:

1954ին, ամուսնացած է բժիշկ Կարօ Մաթոսեանի հետ (1921-2004), զոր ճանչցած էր Պէյրոյթի մէջ: Ունեցած են չորս զաւակներ: 1956ին տեղափոխուած են Պոստոն: Հարվըրտ համալսարանի Ռուսական հետազօտութեան կեդրոնին մէջ, Մերի Քիլպուրն-Մաթոսեան հրատարակութեան պատրաստած է Խորհրդային Հայաստանին նուիրուած իր դոկտորականը, որ լոյս տեսած է 1962ին, Լէյտէնի մէջ *The Impact of Soviet Policies in Armenia* խորագրով: Աւելի քան երկու տասնամեակ, այս հատորը անգլերէն միակ աղբիւրն էր 1920-50ականներու խորհրդահայ ներքին քաղաքականութեան մասին: 1982ին համահեղինակած է *Armenian Village Life Before 1914* մենագրութիւնը Սիւզի Ղուկասեան-Վիլլայի հետ, որ թրքերէնի թարգմանուած է վերջերս (Իսթանպուլ, «Արաս», 2006): 1960-80ականներուն, հրատարակած է նաեւ հայագիտական բնոյթի քանի մը յօդուածներ ու գրախօսականներ տարբեր պարբերականներու մէջ:

1972-2003՝ պատմություն դասաանդած է Մերիլենտի համալսարանին մէջ: Միջգիտակարգային ուսումնասիրություններու բնագաւառին մէջ, 1982ին իրայատուկ մեկնաբանություն մը տուած է ամերիկեան պատմութեան հռչակաւոր դէպքի մը՝ Սալէմի վիուկներու դատաւարություններուն: Պատմական կլիմայական տուեալներու օգտագործումով, ան պաշտպան կանգնած է այն տեսութեան, որ սնկային հիւանդութեամբ վարակուած հաճարի հացը յառաջացուցած է բորբոսի թունաւորման ախտանիշեր, որոնք անգլիացի գաղութարարները վերագրած են վիուկային գործունէութեան: 1989ին, Մերի Մաթոսեան Սալէմի պարագան ընդգրկած է *Poisons of the Past: Molds, Epidemics, and History* խորագրով մենագրութեան մէջ, որ միջազգային ուշադրութեան արժանացած է՝ հանրային առողջապահութեան ու ընկերային պատմութեան իր համադրութեամբ: Աւելի ուշ, հրատարակած է երկու ուրիշ հատորներ՝ *Shaping World History: Breakthroughs in Ecology, Technology, Science, and Politics* (1997) եւ *Plants, Stars, and the Origins of Religion: With a Decipherment of the Phaistos Disk* (2014):

Մերի Քիլպուրն-Մաթոսեան մահացած է 93րդ տարեդարձի օրը, 9 Յուլիս 2023ին, Փորթօլա Վելիի մէջ (Քալիֆորնիա):

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ
varny1@yahoo.com